Տարազ

Աղբիւրի յաւելուած

լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 14 կիրակի 13 ապրիլի | ութերորդ տարի 1897

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրեմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստուած մեծադիր *փոտո-գրաւիւր* պատկերը, 2) *Մայրիկի անձրեւում*, մի շքեղ խրոմօ, 3) *Ոսկէ շղթաներում, կամ Հարսմի աղջիկը*, 4) *Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդաներ*, բացատրութիւններով։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (առաքմամբ 4 ր. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. (առաքմամբ 10 ր. կամ 30 ֆր.), ամսական *Տարազը* 50 կ. *Աղբիւրը*—25 կ. *պրեմիաները ստանում է Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի։*

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Тараз՝ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

ԳԱՂԱՓԱՐԻ ՅՈՂԹԱՆԱԿԸ

Ծանր խաչի տակ, ուժասպառ մարմնով
Մեծ Մարդասէրը արիւնն էր սրբում;
Իսկ ամբոխն անգութ անդադար վրէժով
Սուրը մարդու գլխին անէծք էր թափում։
Փըշեայ պըսակը դեռ վար չէր առած,
Երա քաղցեալ անձը, արնաքամ ճակտից,
Արիւն ու թարախ հոսում էր առատ
Երբա քորքորած, խորունկ վէրքերից։

Աստուծոյ որդին արիւն-քրտինքով
Ծանր խաչի տակ ուժասպառ ընկաւ,
Բայց ներող սրտի ու գութի տեղակ
Ապտակ ու մտրակ վերան թափեցաւ։

Եւ նա գլխակոր տանում էր լըռիկ
Ամէն անարգանք, ամէն դառնութիւն,
Եւ ըիրէն ամբոխին օրհնում էր միայն,
Երա յանցանքին խնդրում թողութիւն։

Սուրբ գաղափարի յաղթութեան համար
Խաչը շալակած Golgotha հասաւ,
Եւ աստաբեալի անյաղթ հաւատով
Այն նախատական խաչին միւեցաւ...

Խաչին միւեցաւ որպէս աւազակ
Դատապարտեալի փըշեայ պսակով,
Եւ հայհոյանքին ու նախատինքին
Նա ականջ դրեց իր ներող հոգով։

Եւ Մեծ Մարգարէն չըդողաց երբէք
Անողոք խաչի ծանրութեան ոյժից,
Անվեհեր հոգով երես չըդարձրեց
Սիրոյ, գթութեան սուրբ գաղափարից։

Բայց հասաւ ժամը... տանջանքների մէջ
Պապակած լեզուով Մարգարէն մեռաւ,
Բայց արեան գընով խաչը ծառը դարձաւ՝
Դարերի համար Աստուած կոչեցաւ...

Պետ. Մոմոռեանց

ԹՇՆԱՒՈՒԹԵԱՆ ՁՈՀԸ

(Ջատկական զրոյց)

—

Մեր Յաբխարհի բակուկ ելնիհու ճիրհե
Նսաած մամ, պապ, ճժիր մացին անարև.
Հայհոս չմէն գերի եղաւիք բախտին անողոք,
Սաստած, հրեշտակ, մարդ չըլսեց մեր բողոք:

Ժողովրդ. երգ.

Ջատկի շաբաթ օրն էր... X քաղաքը մի անսովոր կենդանութիւն էր ստացել: Ամեն մի փողոցում, ամեն մի անկիւնում տիրում էր կատարեալ իրարանցում... Թէ ծեր, թէ մանուկ, թէ կին, թէ տղամարդ բոլորն էլ մի առանձին ուրախութիւն էին զգում և մի ինչ որ նշանաւոր երևոյթի սպասում...

—Տանդ, տանդ— վերջապէս լսեց զանգակների անուշիկ զօղանջիւնը և մի քանի րոպէից յետոյ մայր եկեղեցին լցւեց խուռն բազմութեամբ:

Այդտեղ կարելի էր գտնել ամեն դասակարգի և հասակի մարդկանց:

Բոլորն էլ հայեացքները դէպի սեղանն ուղղած՝ խորհրդաւոր երկիւղածութեամբ լսում էին ժամերգութիւնը և մերթ ընդ մերթ երեսները խաչակնքելով արտայայտում իրանց ջերմեռանդութիւնը...

Վերջապէս լսեց դպիրի քաղցրաձայն երգը, որ աւետում էր Մեծ Վարդապետի յարութիւնը—բարու և ճշմարտի յաղթանակը...

—Քրիստոս յարեաւ ի մեռելոց—22նջացին բոլոր աղօթողները և սկսեցին կամաց-կամաց դուրս գալ եկեղեցուց:

Դուռն մօտ շարւած էին բազմաթիւ մուրացկանները—տաճկահայ գաղթականները:

—Աղա ջան, խանում ջան, մէկ մէկ ողորմութիւն տէք. Քրիստոս ձեր տուն, ձեր արև պախա, Ս. Ջատիկ ձեր գործին աջողութիւն տայ—մրմնջում էին նրանք և երկչոտութեամբ ձեռքներն երկարացնում անց ու դարձ անողներին:

Ահա եկեղեցուց դուրս եկաւ մի հաստավիզ աղա: Նա գրպանից հանեց նախապէս պատրաստած կոպեկանոցները և սկսեց բաժանել մուրացկաններին:

Եկեղեցու դռնից քիչ հեռու, քարի վրայ նստել էր մի ծերունի գաղթական... Խարեղործ աղան նրան էլ *մի հոպէկանոց* շպրտեց, ասելով.

—Բեօփակ, չէս կարող ոտի կանգնել և մօտենալ:

Ծերունին ցնցւեց. այդ խօսքերը խորը խոցեցին նրա սիրտը: Նա մի արհամարհական հայեացք ձգեց աղայի վրայ և առանց մի խօսք ասելու, առանց վիզը վերցնելու հեռացաւ իր տեղից:

—Թէ, անիծւիք դուք, անիծւիք, լինչպիսի կոպիտ և անամօթ մարդիկ են... բացականչեց աղան և շարունակեց ճանապարհը:

Ծերունի գաղթականը վանայ Թշւառացած Հարուստներից մէկն էր: Մի քանի օր էր, որ նա գաղթել էր Հայրենի երկրից: Նրա պատուասիրութիւնը դեռ չէր անհետացել, նրա զգացմունքները դեռ չէին բթացել, ուստի և նա անկարող էր այդ ձևով ողորմութիւն ստանալ...

Նա քաշւեց մի հեռու անկիւն և անձնատուր եղաւ իր անթիւ վշտերին, իր դառն մտածմունքներին...

—Ուրեմն ես ստոր մուրացկան եմ—մտածում էր նա—ուր են իմ տունն ու վաթան, ուր են իմ սիրասուն զաւակները, իմ կինն ու հարսները...

—Աւաղ, նրանք բոլորը քիւրդի ու տաճկի սրին զոհ գնացին... պատասխանում էր մի ներքին ձայն:

—Հապա ուր են իմ լիք-լիք շտեմարանն ու մառանը, իմ ճոխ սեղանն ու ամբողջ հարստութիւնը...

—Աւաղ, նրանք բոլորը դաղանասիրտ մահմեդականի սեպհականութիւնը դարձան —պատասխանում էր նոյն ձայնը:

Եւ այդպէս անցեալի դառն յիշատակները տանջում հալ ու մաշ էին անում Թշւառ ծերունուն, իսկ ժամանակը կայծակի արագութեամբ սլանում էր դէպի առաջ: Եկեղեցու դռները վաղուց արդէն փակած էին և գաւթում ոչ մի մարդ չէկար: Ամեն մէկն իր տունն էր շտապել զատկական ընթրիքն անելու, մեծ տօնի ուրախութիւնը վայելելու...

Ծերուկը նայեց իր շուրջը, նկատեց այդ բանը և սրտիցը խորը «ախ» քաշեց... ապա բարձրացաւ տեղից և քայլեց դէպի առաջ...

Մութ գիշեր էր... փչում էր ցրտաշունչ քամին... Ծերունին անցաւ մի փողոց, շուռ եկաւ միւսը... Նա դեռ անծանօթ էր քաղաքի *կոմիջ ու պուշաղին*. դեռ լաւ չըգիտէր բոլոր փողոցները, ուստի և չըկարողացաւ գտնել իր օթևանը—ներքնայարկ նկուղը:

Նա երկար թափառեց, երկար դէս ու դէն ընկաւ և վերջապէս ուժասպառ եղած, ցրտից ու սովից կուչ եկած՝ կանգնեց մի մեծ տան առաջ... բաղխեց դուռը...

—Բարի քրիստոնեաներ, անտուն-անտէր գաղ-

թական եմ... փշուրըմ հայց տուէք ուտելու, կտորըմ տեղ տուէք սրթրելու (պատսպարելու), մրմնջայ նա դուռը բացելուն պէս:

Սակայն ծառան ոչինչ չըպատասխանեց, դուռը շրխկացնելով փակեց և արագ արագ վերև բարձրացաւ:

Ապշած ծերուհին տեղն ու տեղը կանգնած մնաց...

—Այսպիսի օրում, այդքան քարասրտութիւն, մտածում էր նա և նորից դուռն բացելուն սպասում: Անցաւ բաւական երկար ժամանակ, բայց դուռը պարձեալ փակ էր...

Ծերուհին շարունակեց իր ճանապարհը և մի քանի րոպէից յետոյ կանգ առաւ մի ուրիշ տան առաջ: Խաղնեց... Սակայն այս անգամին դռան փոխարէն լուսամուտը բացուեց և նրա միջից դուրս նայեց մի միջահասակ պարոն — տանտէրը:

—Ո՞վ ես, ինչ ես կամենում, դուռայ նա բարկութեամբ:

— Գաղթա...

—Դէ կորիր, անպիտան, ինչ ժամանակ է գտել, շարունակեց պարոնը և փակեց լուսամուտը:

Թշուառ ծերուկը յուսահատութիւնից չէր իմանում ինչ անէր:

Արտասուքի կոր-կոր կաթիլները գլորւում էին նրա կնճռոտած դէմքի վրայով և անհետանում ձեան նման սպիտակ մօրուքի մէջ: Ուժգին հեծկլտանքը շարժում էր նրա կրծքի վանդակը... Նա դնում էր առաջ, բայց ինքն էլ չըգիտէր թէ ինչու և ուր...

Վերջապէս նա հասաւ կամուրջին, որի տակով հոսում էր ամեհի գետը...

—Թը՛ղ չը՛վի, թը՛ղ չը՛վի, ձայնարկում էին կատաղի ալիքները և կարծես իրանց գերին էին հրաւիրում վերևից պիտողին:

—Թշուառակա՛ն, էլ ինչու ես այդքան տանջւում, թռի՛ր մեր գերի՛կը, մենք կըպատսպարենք քեզ և ընդմիշտ կըվերացնենք քո վշտերը — կարծես լսւում էր նրանց շշուկը ծերուհու ականջին...

Անցաւ մի քանի րոպէ...

Ծերուհին վերջին անգամ նայեց երկնքին, նայեց իր շուրջը, խաչակնքեց երեսը և... գետը յետ ու յետ մղեց իր ալիքները, բաց արեց կուրծքը և ընդունեց թշուառուհեան դոհը: Փրփուրը ծածկեց ծերուհու ընկած տեղը և գետը նորից իր բնական ընթացքն ստացաւ:

Ոչ ոք չըցաւեց թշուառի վրայ, ոչ ոք էլ չըտեսաւ նրա կորուստը... Երկինքն էր միայն վկայ այդ եղեռնագործութեան. նա էլ սև սև ամպերով ծածկեց իր դէմքը և արտասուքը շաղ տւեց անդունդ երկրի վրայ:

Լուսացաւ... Քաղաքը նորից կենդանացաւ...

—*Քրիստոս յարեաւ ի մեռելոց*—լսւում էր ամեն կողմից...

Ե. Թովմեան

Լ Ի Մ Ա Ն *)

II

Ո ողջոյն ձեզ, շըքեղ ափեր,
Հոգուս հըմայք սքանչական,
Որ կախարդում էք իմ մտքեր
Ձեր տեսքով թովչական:
Ողջոյն լեռներ ու ձիւնէ թազ,
Որ ջըրերին էք ժպտում,
Սըրտանք թաղուն՝ հովանու տակ
Անտառների կամ հովտում:
Սիրո՛ւն սարեր, որ մամռապատ
Կրծքով հպւում էք ջըրին,
Ինչպէս հպւում է անընդհատ
Փաղաքշանքը ջերմ սէրին:
Ձեր դագաթին արշալոյսը
Մերթ վառւում է հըրագոյն,
Մերթ նուրբ ամպով սքողում լոյսը,
Ինչպէս փափուկ քօղով կոյսը
Իր մերկութիւն վարդագոյն:
Ձեր կատարը սառցաբիւրեղ՝
Ոսկեղէնիկ ամպի հետ
Համբուրւում է երկնում շըքեղ,
Գուրգուրւում է աստղի հետ:
Եւ կայծեր են ցայտում նրանից
Արեգակի շողի տակ,
Որպէս աչքերը հըրալից
Սիրոյ բախտիցն անապակ:
Եւ դուք կանգուն էք վեհ-խարի,
Հըսկաներըդ դարւոր,
Միշտ անկորնչան հըպարտ, արի,
Զարդարանքով դունաւոր:
Օ՜ ողջոյն ձեզ, վայրե՛ր և օդ,
Եւ կապուտակդ երկնքի,
Աղբիւր ցաւի սիրակարօտ
Եւ անկշտում զմայլանքի:
Խորհրդաւոր քարայրների,
Վէս ու հըպարտ այդ ժայռերի
Եւ ջրերի հէնց մօտը
Քանի՛ ողի հանճարների
Ընչել է ձեր մեղմ օդը,

*) Տես Տարազ № 13.

Իր մտքերն է լուռ պըտտել
Այդ ափերով սիրահար,
Մըտածել է, սիրել, ատել,
Լացել, յուզուել անդադար։
Այդտեղ տանջուել է, բողոքել
Մըռայլ հանճարն բայրընի.
Այդտեղից է ստէպ առաքել
Իր խայթոցը սուր, անարգել
Վոլտէրը՝ մեծ ծերունի։
Այդտեղ է իր երազն մաքուր,
Փափուկ սրտի ճիչը տխուր
Պատմել սիրած բընութեան
Ջէլլի՝ ժամին տրտմութեան։
Այդտեղ է և Ռուսսոն անահ
Ամենազեղ կրքերով
Ապրել նրանց հետ. որոնց անմահ
Իր վրձինի ներկերով
Տըւել է կեանք մի սրտաշարժ,
Ե՛ւ մտքերի նոր հոսանք,
Եւ զգացումներ նուրբ, սիրաշարժ,
Ե՛ւ երազներ, և՛ տանջանք։
Նոյնպէս Ստայլը, որի հըպարտ
Հրապոյրին է ներդաշնակ
Բընութեանըդ այդ շըքեղ զարդ,
Ջարդ հանճարն էլ նրա յստակ։
Այդտեղ և նա, մեծ ծերունին,
Փայլուն Հերոս Գարիբալդին,
Ազատիչն իր երկրի,
Իր մի ձեռքին սուրը ձիթենին
Եւ միւսում իր սուրն արի՝
Ամեն ազգի եղբայրութեան,
Ազատութեանը մարդկութեան
Քարոզիչ էր, ջատագով,
Ոգևորւած մի հոգով...
Ա՜հ, կանգուն էք, ափեր, սարեր,
Կանգուն ինչպէս և առաջ,
Կրմնաք կանգուն անվերջ դարեր՝
Թէ վեհ, թէ գոհ, թէ տրհաճ.—
Մինչդեռ այն մեծ հսկաները,
Որոնց անմահ անուրջները,
Գըգւել էք ու բաժանել,
Ինչպէս ցաւը, ճիճաղն էլ,
Տիտանների այն գոռ շարքը.
Որ թնդացրել են երկիրներ,
Նորոզել են մարդկանց սրտեր,
Յեղաշրջել կեանք ու վարքը,
Փայլել, որպէս արեգակ,
Ջարկել, որպէս շանթ, կայծակ,
Միշտ վրսեմ ու յաղթական,—
Նրանք մեռած են, էլ չըկան։

III

Ո դու, որիդ տեսքն առնական
Կիսագէմքով ըսպառնական
Բիւրեղացած է գազաթին
Մոն-Բլան լեռան ձիւնափայլ*),
Ուր իջնում են քո ճակատին
Ըստէպ ամպերը մըռայլ.
Հոգիդ հսկայ մի հերոսի,
Նապոլէօն, գոռ Արէսի
Գոռ ընտրեալը հոգեմայլ,
Ի՞նչ ես երկնի անապատում,
Ասես խորհուրդ մէկ անպատում,
Խրւել մենակ, անմատչելի,
Գերիդ կղզի Սէնտ-Հէլէնի։
Դու, մեծ արքայ արքաների,
Որ գերեզմանդ ես կառուցել
Բարձր գլխին արքայ լեռի,
Ուր բնութիւնն է քեզ սառուցել
Երկնի կրծքում, ուր իսկ արքան
Թռչուններն էլ չէ սաւառնում.
Դու, որ մահից յետ էլ մարդկան
Տիրել ես դեռ միշտ ըսպառնում.
Գերեզմանից քո այդ հսկայ,
Ամենքից վեր և միշտ ներկայ,
Յաւերժ եղած աշխարհի
Մի քարացած ու պաղ վրկայ,
Որ նա քեզ միշտ խոնարհի.
Դու, որ այդտեղ գոռ որոտման,
Ամպերի հետ ես մընում,
Առաջինն ես շողն աւետման
Արշալոյս ըստանում.
Աղամանդեայ պաղած մի թաղ
Գու զարձած այդ բարձունքում՝
Այժմ էլ, ասես կամքով անյաղ,
Ինչպէս և քո բուռն կեանքում,
Ամեն բան ես ուզում մընալ,
Միշտ մեծ, միշտ խիստ աշխարհակալ,—
Ո չ, գոռ չըկաս և չէս լինիլ,
Քո գարն էլ չի վերածընիլ։
Յաղթող գոռոզ տիրողների,
Դողացընողդ աշխարհի՝
Ընկար յաղթւած անզուսպ հոգմից—

*) Ժընէվից դիտելիս՝ Մոն-Բլան լեռան գագաթը խիստ նմանութիւն ունի Նապոլէօն առաջինի կիսագէմքին (պրօֆիլին) պառկած դիրքում։

Ժողովուրդի վեհ ցասումից։
Եւ այն բոլորն, ինչի որ դու
Արմնացումն էիր ազգու,
Փահավիժւեց յաւիտեան,
Քեզ պէս, քեզ պէս, ո տիտան։

Ա. Հ.

(Կը շարունակի)

ՊԻԱՏԲԱ ԱԲՍԱ

(Կարմեն Սիլվա)

Հպարտ, շատ հպարտ էր գեղեցկուհի Պաուենան։ Իզուր չէին նրա աչքերը այնքան մեծ, թուխ, յօնքերը սև և քիմքը արծաթին. նրա բերանը փոքր ինչ մեծ էր, բայց հիանալի գծագրած. երբ նա խօսում կամ ծիծաղում էր, փայլում էին նրա երկու շարք ատամները։

Սև ծամերը ընկած էին նրա գլխի վրայ, ինչպէս թագ. մարդիկ նրան կատակով «Երիտասարդութեան Թագուհի» էին անւանում. երբ նա գնում էր մեծ մեծ քայլերով, գլուխը յետ ձգած, կարծես նրա վրայ մի բան էր տանում։

Բայց նա չէր հպարտանում և գլուխը այդպէս յետ չէր ձգում, երբ Տաննասը մօտենում էր նրա հետ խօսելու։ Նա լսում էր նրան։ Սակայն երբ մի ուրիշն էր կատակ անում, արիւնը զարկում էր Պաուենայի երեսին ու չանդուղնի համար պատրաստ կար սուր պատասխանը։

Երիտասարդութիւնը սաստիկ նախանձում էր Տաննասին, մանաւանդ երբ նրանց իրար խօսք տալը սկսեցին անկասկածելի համարել։

Բայց ժամանակը պատերազմային էր։ Տաննասը գընդի հետ պիտի գնար դէպի Խանուբ։ Մարդկանց առաջ Պաուենան ծածկում էր իր արտասուքը, իսկ ծածուկ նա արտասուում էր. դրա մասին ոչ ոք չէր վստահանում հարցնել։

Նա կարողանում էր միշտ այնպէս անել, որ գիւղում առաջինն էր լուրեր իմանում զօրքի մասին։ Լսելով առաջին ճակատամարտի մասին՝ նա ստիպւած էր չեներ քարէ խաչին, որ տնկած էր գիւղի մուտքին։ Կորովի աղջկայ աչքերը մթնեցին։ Խիշերը նա չէր կարողանում քնել և ճրագը չըհանգցրեց, որպէսզի չըներկայանային նրան զանազան սարսափելի պատկերներ,—Տաննասը վիրաւորւած, մեռնելիս, մեռած... Մութ գիշերով նա նստած էր անկողնու ծայրին, գեռ չըհանւած, և չէր իմանում, որ տան մօտով մի մարդ անցաւ և հիմա նայում է նրան պատուհանից։ Նա նոյնպէս չըգիտէր, որ ինքը շատ գեղեցիկ էր այդպէս, իր լայն բացած մտախոհ աչքերով, ձեռքերը ծնկների մէջ սեղմած։ Պատուհանը ծեծեցին. իրան զգուշացնելով՝ որ չ'աղաղակէ՝ նա ցատկեց, բարձրացրաւ գլուխը, նայեց դէպի մթին տարածութիւնը։ Նրան թւում էր, թէ տեսնում է Տաննասին այդ միևնոյն րոպէին. նրան հանդարտ կանչեցին.

—Պաուենա, խնդրում եմ քեզ, սիրելի Պաուենա, դուրս եկ այստեղ, ինձ մօտ. մի վախենար, ես Տաննասն եմ։

Պաուենան բացաւ դուռը, ցատկեց և զգաց որ իրան դրկեցին. նա հեռացրաւ ձեռքը, որ նրան գրկել էր և հարցրեց.

—Իրաւ այդ դու ես, արդեօք ոչ ոք չէ՞ մտածել ինձ ծաղրելու։

—Ահա, Պաուենա, շօշափիր—քո մատնիքը, իսկ ահա վէրս դրամը... Ես չըկարողացայ համբերել, ուզեցի տեսնել, հաւատարիմ ես դու ինձ, թէ ոչ...

—Ո՞վ է քեզ վնդել զօրքից։

—Ի՞նձ. ոչ ոք։

—Ոչ ոք. բայց ինչպէս դու եկար, մինթէ պատերազմը վերջացել է։

—Դեռ չէ վերջացել, դեռ կռւում են. ես ծածուկ եկայ, որովհետև քեզ սիրում եմ, Պաուենա։

—Սիրում ես ինձ։

Նա ծիծաղեց սուր և կարճ։

—Եւ այդպէս դու կարծումես ես կուրախանամ, որ իմ սիրելին փախստական է. հեռու իմ աչքից։

—Ի՞նչպէս, Պաուենա, այդպէ՞ս է քո սէրը, ինձ ուղարկում ես դէպի կորուստ, դէպի մահ...

—Գնա, ուր ուզում ես. ասում եմ քեզ, երբէք ես քո կինը չեմ լինիլ... Արհամարհել ամուսնուն՝ ես այդ չեմ կարող տանել։

—Դու ուրիշին ես սիրել։

—Ոչ, Տաննաս. միայն քեզ եմ սիրել ու սիրում. և գիշերները քո պատճառով չեմ քնել. բայց երազումս անգամ չեմ տեսել, որ իմ պաշտելիս վախկոտ է։ Եւ նա երեսը ծածկեց ձեռքերով և հեկեկաց։

—Իսկ ես կարծել եմ, թէ դու ինձ ուրախութեամբ կ'ընդունես, ինձ կըթագցնես։

—Օ, ամօթ, աղաղակեց աղջիկը, ամօ՛թ, որովհետև ես քո հարսնացուն եմ... Բայց ասում եմ քեզ, որ աւելի շուտ կայրէ Բուչեջին, քան ես քո կինը կըլինեմ։

—Իսկ ես քեզ ասում եմ, բացականչեց Տաննասը—դու կըտեսնես ինձ մեռած կամ այլանդակւած։

Երիտասարդը և օրիորդը կանգնած էին իրար հանդէպ. նրանց հայեացքներն այնպէս էին փայլում, որ լուսաւորում էին մթնում։

Յանկարծ վերևում ծագեց կարմիր արշալոյսը. նրանք նայեցին։ Բուչեջիի սուր և գրանիտի գագաթներից մէկը կարծես թէ այրւում էր։

Կրակն աւելի և աւելի էր վառւում. բարձրանում էր բոցը, կայծերը աստղերի պէս ցայտում էին։ Երիտասարդները կանգնած էին, նոյնպէս քարացած։

Հարևան տների պատուհանները սկսեցին բացւել։ Ժողովուրդը կանչում էր «Անտառային հրդեհ»... «Ոչ, սարն է այրւում»։

Շները հաչում էին, աքաղաղները կանչում։

Պաուենան բռնեց երիտասարդի ուսից և շպրտեց շատ հեռու։

—Կորիր,—կանչեց նա,—ծածկիր երեսդ, թէ չէ ես կըմեռնեմ ամօթից։

Նա ծածկեց իրանց դուռը և հանգցրեց ճրագը։ Նրա սիրտը սաստիկ բաբախում էր. նա նայում էր, թէ ինչպէս Տաննասը տան ստւերների տակով ծածուկ անցնում էր, ինչպէս էր այրւում սարը, ինչպէս բոլորը քիչ քիչ մըթնանում էր, և ձայն չըտւեց, երբ նրան կանչեցին նայելու հրաշքին։

ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳ.—Սար գնալը

Այդ օրից ամենքը տեսնում էին, որ Պաունան չափից դուրս գունատած է։ Ժպիտը էլ չէր խաղում նրա շրթունքներին, որոնք առաջ այնքան չարաճճի և ուրախ էին։

Ծաղրանքները էլ չէին ընդհատում սուր պատասխաններով, որոնց մէջ աղջիկն առաջ այնքան ճարպիկ էր։ Լուռ աշխատում էր և չաճախ այնպէս էր յոգնում, որ նստում էր ջրհորի մօտ և գլուխը հովացնում ջրով։

Երբեմն տխուր նայում էր նա ջրհորին և վախեցած աչքերը բարձրացնում դէպի Ռուչեջին։ Սկսեցին բամբասել, թէ Տաննասը եկել է գիւղը. սա և նա տեսել են նրան այդ ժամանակ այրուղ սարի լոյսով, մինչև անգամ ճանաչել էին նրա ձայնը Պաունայի հետ խօսելիս։

Սկսեցին նրան հարցնել։ Նրա ճակատին քրտինքի կաթիլներ երևացին, շրթունքները դողդողացին. նա պատասխանեց.

—Կարծեմ, երբ որ սարը այրւում էր՝ մեր կողմը և մութն էր և հանդարտ։

Պաունայի մայրը շարժում էր գլուխը, կծոտելով շրթունքները և ասում էր, որ մեր մեղաւոր ժամանակ շատ մեծ հրաշքներ են կատարւում։

Ջուտով լուր հասաւ, որ սոսկալի ճակատամարտ է տեղի ունեցել։

Պաունան այն անգամ բոլորից ուշ իմացաւ այդ բոթը։ Ջտալով վազեց տուն, կազմեց մի կապոց, փաթաթեց թաշկինակի մէջ դդում և եգիպտացորեն, իսկ երբ որ մայրը շփոթւած հարցրեց՝ ո՞րտեղ է նա պատրաստւում գնալու՝ նա միայն պատասխանեց.

—Ջուտով կը վերադառնամ, մայր, ինձ համար մի անհանգստանար։

Կուի դաշտը լայն փռւած էր երեկոյեան աղջամուղջի մէջ. այնտեղ ընկած էին հազարաւոր վիրաւորւածներ. ձիաները ընկնում էին և մեռնում, ցած ձգելով գլուխները նրանք դիպչում էին դիակներին... Խարոյկների շուրջը հանգստանում էր զօրքը, ականջ չդնելով հեծկլտոցներին, որոնք լսւում էին դաշտից։

Մի բարձրահասակ կին անցնում էր զինւորների շարքերով. նա փնտրում էր ամբողջ բանակում և հարցնում Տաննասի մասին... Համարձակ մօտենում էր նա իւրայիններին և թշնամիներին.շատերին ջուր տւաւ խմելու և ուշադրութեամբ նայում էր արիւնաքամ եղածներին։ Արդէն խորին գիշեր էր, լուսինը լուսաւորում էր սարսափելի տեսարանը, բայց աղջիկը դեռ անցնում էր ամբողջ դաշտով, դեռ ման էր գալիս, կանգ էր առնում, չոքում էր, դնում էր իր կրծքի վրայ մեռածի գլուխը և նրա զգւելի, այլանդակ դիակի վրայ փնտրում էր մատանին կամ վզի դրամը։

Միայն մի անգամ սարսափած նա յետ քաշւեց. կանայք կողոպտում էին մի դիակ. նրա մատները ճռռացին, երբ որ սկսեցին հանել նրա մատանին.ը... Նա փախաւ, բայց իսկոյն յետ դարձաւ, և բոլորովին լարւած շարունակեց նայել սպանւածներին։

Ամբողջ բանակը խորասուզւած էր քնի մէջ։ Իսկ Պաունան բոլոր ժամանակ թափառում էր զարհուրելի դաշտում, լուսաւորւած լուսնի ճառագայթներով, և մի քանի անգամ հանդարտ կանչեց.

—Տաննա՛ս...

Երբեմն նրա ձայնին պատասխանում էր մի տընքոց...

Բայց նա տխուր շարժում էր գլուխը և վիրաւորներին ջուր տալիս։ Առաւօտը մօտենում էր, երկինքը սպիտակում էր, լուսնեակի լոյսը գունատւում էր. մի բան փայլեց. նա մօտեցաւ. սպանւածը կիսահան էր, բայց նրա ձեռքին երևում էր բարակ մատանի և նա սեղմած էր մի բան, որ նա քարշել էր իր վրից. սեղմած էր այնպէս ամուր, որ կողոպտողները անշուշտ չէին կարողացել նրա ձեռքից խլել։

—Տաննաս, բացականչեց Պաունան, ճանաչելով իր մատանին, և ընկաւ մարմնի մօտ, որի երեսը ոլորւած էր արիւնով և անճանաչելի էր։ Մի քանի րոպէից յետոյ, երբ ուշը գլուխն եկաւ, նա սկսեց լւանալ այդ թանկագին երեսը։ Լալագին աչքերով նա տեսաւ, որ երկու աչքերը և քիթը ոչնչացած էին սրի հարւածից. Նա նոյնպէս նկատեց որ արիւնը կրկին կաթեց. պարզ էր, որ սիրելին կենդանի է։ Նա շտապեց թրջել նրա շրթունքները և կապեց նրա վէրքը իր թաշկինակով։ Նա հառաչեց, լսելով իր անունը, սկսեց բռնել օդը ձեռքերով և երկար շօշափում էր Պաունայի երեսը։

—Իմ Պաունա, շշնջաց նա հազիւ լսելի ձայնով. թող մեռնեմ, ես կոյր եմ, ես այլ ևս հարկաւոր չեմ աշխարհքումս։

—Հարկաւոր ես, հարկաւոր ես, աղաղակեց Պաունան. իմ սիրելիս, դու, եթէ Աստծոյ կամքն է, իմ ամուսինն ես, իսկ առայժմ լո՛ւր, լո՛ւր։

Շատ շաբաթներ անցան այդ օրից, և այդ բոլոր ժամանակը, դիշեր և ցերեկ անց էր կացնում Պաունան Տաննասի անկողնու մօտ. հոգս էր տանում նրա մասին, առանց հանգստանալու։

Գիւղի փողոցով գնում էին երկու հոգի։ մի կոյր՝ զինւորականի վերարկուով, շքանշանը կրծքին. նրան խնամքով տանում էր մի աղջիկ, և ուրախ ու բարեկամօրէն ասում էր պատահողներին.

—Ահա իմ փեսան. նա հերոս է, ահա և պատւանշանը նրա կրծքին և դէմքին,—մեղմ հառաչելով աւելացնում էր Տաննասը։

Երբէք այդպիսի փառաւոր հարսանիք չէր եղել. մօտիկ և հեռու կողմերից գալիս էր ժողովուրդը նայելու գեղեցկուհի Պաունային, ձեռք ձեռքի տւած կոյրի հետ։ Նա բոլորին ժպտալով ասում էր.

—Ես հպարտանում եմ. իմ ամուսինը հերոս է, փառք Աստծոյ, ես ունեմ ոյժ և երկուսիս համար էլ կարող եմ աշխատել։

Սարը, որի վրայ տեսան կրակը, կոչեցին «Պիտրա Արսա» (այրւած քար), որովհետև հովիւները և որսորդները երդւում էին, որ ապառաժներն այնտեղ աճում էին դարձել։

Or. Աննա Նազարեան

Պետերբուրգ

ԱՐՀԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

(Կատուլ Մենդէսից)

ՔԱՂՑՐ ՏԱՆՋԱՆՔ

Փէկն ասաց.

—Ես խաղցած եմ։

Եւ նա գնաց խնձորենու մօտ, որը կարմիր խնձորների ծանրութեան ներքոյ կորացել էր, եւ կերաւ, մինչեւ որ խաղը յագեցրաւ։

Միւսն ասաց.

—Ես ծարաւ եմ, խմել եմ ուզում։

Նա գնաց աղտաւի միջի մարգագետինը, ուր կարկաչելով հոսում էր պարզ ու յստակ առուակը եւ խմեց, մինչեւ որ ծարաւը յագեցաւ։

Երրորդն ասաց.

—Ես ոչ խաղցած եմ եւ ոչ էլ խմել եմ ցանկանում։ Սակայն ես սիրում եմ խելացնոր կերպով։

Նա աշխարհ աղցաւ, սիրեց, բայց չըսիրուեց ուրիշներից. եւ կրում էր յաներեւակայելի տանջանքներ։

Ապա մի անգամ, այդ երեքն էլ նորից հանդիպեցան իրարու։

Նախինն ասաց.

—Յագեցնելով խաղցս, ես չեմ ցանկանում այլ եւս ուտել եւ կատարելապէս գոհ եմ։

Միւսն ասաց.

—Յագեցնելով ծարաւս, ես չեմ ցանկանում այլ եւս խմել եւ ինձ գգում եմ շատ լաւ։

Իսկ երրորդն ասաց.

—Ես սիրեցի, բայց ինձ չըսիրեցին։ Սակայն ես աւելի բախտաւոր եմ ձեզանից, որովհետեւ դեռ սիրո՛ւմ եմ...

Բար. Մ.-Ֆով.

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

Տասն եւ ինն դար, իւրաքանչիւր տարի, միմեանց ձգտիկ ենք ընորհաւորում, *Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեալ* կրկնելով, աւետում չարի խորտակիչը, արդարութեան, ճշմարտի յաղթական պսակը։

Ինքը Փրկիչը օրինակ եղաւ մեզ, որ մահով է միայն անմահութիւն ձեռք բերւում, արեամբ է միայն փրկութիւն բաշխւում։

Եւ դարերից ի վեր աստւածային այդ օրէնքը՝ *մահով անմահութիւն, պղիտով փրկութիւն* սպանիլը շարունակւում է։

Այսօր այն պախարհը, որտեղից սփուել է գիտութիւն, այն լեռները, որոնք դղրդացել են բարին, գեղեցիկը երգելիս եւ արձագանգ տալ համայն աշխարհին, ոգեւորել նրանց, դրդել ընթանալու ճշմարիտ ճանապարհով, այսօր այդ աշխարհի զաւակները յանուն Քրիստոսի Սուրբ Խաչի եւ իրանց արիւնակիցների փրկութեան համար մարտնչում են իսլամի մոլեռանդ զաւակների դէմ։ Թէ ո՛վ յաղթող կըհանդիսանայ—բուռն հայրենասիրութի՞ւնը, թէ մոլի իսլամի հպատպղութիւնը—այդ վաղը կիմանանք։ Սակայն ինչպէս էլ վերջանայ յոյն-տաճկական պատերազմը, այնու ամենայնիւ անպատճառ Դողգոթա-Պառնասը բարձրացնելու է ճշմարտի յաղթական դրօշակը։

Ալիքսոպի լանջերից այսօր արեան գետեր են հոսում, բայց վաղն պիտուց այդտեղ կըսփռւի վարդ-յասմիկի բուրմունքը եւ հաւետս մանուշակը անդորրութեան ու հեզութեան էմբլեմը՝ արդարութեան ճշմարիտ ջուրցնի հետ՝ պսակներով կըզարդարէ հայրենասէր նահատակների գերեզմանները, որոնց շուրջը կըտիրէ խաղաղութիւն, անդորրութիւն եւ արդար աշխատութիւն ու լիութիւն։

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Մեր խմբագրատան ծառայողներին հրամայւած էր, որ պ. Վ. Փափազեանին չըթողյատրեն երբէք ոտք դնել մեր խմբագրատան շէմքում ու նրա անունը վաղուց էր, որ Տարազը դադարել էր յիշելուց՝ չրատ. Ընկ. ընդհ. ժողովի առիթով, մարտի 29-ին պ. Վ. Փափազեանց ուղարկում է մեզ հետեւեալի նամակի հետ՝ իր ասելիքը, որ անփոփոխ տպագրեց Տարազի № 12 մէջ։

„Պ. պ. խմբագիր

„Խնդրում եմ այս ներփակեալ նամակը „շարել վաղուայ Տարազի համար անպա„ճառ, որպէս զի պ. պ. Ղազէեանի և Թու„մանեանի նամակների հետ դուրս գայ և „որպէս զի չը դուրս գայ որ ես այդ գրել „եմ այսօրուայ Մշակի մէջ իմ մասին „գրելուց յետոյ։

29 Մարտ. Յարգանօք

Վ. Փափազեանց՝

Անսահման հակակրելով պ. Վ. Փափազեանին՝ իբրեւ քաղաքացիի, մենք իրաւունք չըհամարեցինք չըտպագրել պարոնի այն ասելիքը չրատ. Ընկ. ընդհ. ժողովի առիթով։

Այսու յայտարարում ենք, որ պ. Վ. Փափազեանի հետ մենք ոչ մի առընչութիւն չունենք։

Գալով գրագէտների բողոքին չրատ. Ընկ. դէմ, մենք բացել ենք Տարազի էջերը այդ խնդրի առիթով նրանց առաջ, իրանց արդար բանակռիւը առաջ տանելու։ Տարազի կռիւը Մշակի դէմ այլ է։ Մենք բացարձակ յայտնում ենք, որ այժմեան Մշակը յոռի ընթացք է բռնել։ Գաւաճանել է նրա վսեմ հիմնադրի գաղափարներին, ձգտումներին և ծաղրում է այսօր վարձկանների շահերին։ Մենք կապացուցանենք, որ պ. Եղ. Քալանթար և ընկ. դեռ Գրիգոր

Արծրունու կենդանութեան ժամանակ, (92 թ. աշնան), ժողովներ էին անում Գրիգոր Արծրունուն և նրա Մշոյը տապալելու, սակայն անողոք մահը կտրեց Արծրունու կեանքի թելը և դաւաճաններն ու դաւադրութիւնները մարքսողները հակառակ Գրիգոր Արծրունու ցանկութեան և նրա Մշոյի խաղաղութեամբ այսօր մէր են գործելու Մշակին։ Մենք մինչև վերջը կը քաշենք վարագոյրը, թող ապրի յետնեան իրերի դրութիւնը և ըստ այնմ իր գատաստանն անէ։

ՃԷԼԻԵՏՑԻ ՓոխարէՆ

ՊԵՏՅՆՋԻՆ

Չմոռանայն իմ խոստման, տալիս եմ մարտի 22-ին ներկայացուած ֆարսը ուեցենգրան։ Ֆարսը բաղկացած էր մի գործողութիւնից, վերնագրուն էր «Նարիւրը մէկը դէմ» կամ «Ուռնէտների արշաւանքը», հեղինակութիւն ապրիս ամենահանճարեղ վիպասան Նամալեանի։ Բեռ խաղամիջոցին, այսինքն օպերետից յետոյ, Գէլօն (նոյն և Վանօն) մօտեցաւ ինձ և յաղթական եղանակով ասաց։

—Վո՛նց եր, տեհար ինչ զադա կէնճիք ուռնիք։

—Տեհայ, աղպէր, զօռբա իք էլի, իմ արիւր։

—Ապա հիմա աչքերդ բաղմնչու արա ու տես, թէ ինչ օչին պտի խաղանք այ էն ուէնեգատի գլխին, վուր չլիս մէր աչքի փուշն է դարձիլ։

Այս առերով, Գէլօն գլխով ցոյց տուեց ինձ մի երկար մազերով մարդու, որ հեռուում կանգնած, բանից բէխաբար, ծխում էր։ Ապա նա գարձաւ սև Սանդրոին ու գոչեց։

—Ախարհ մէր կէնճիքաշէն, մէր աչքի լոյս, մէր գլխի տէր ու տիրական, մէր հաւատ ու յոյս, մէր գլաւնօկամանդուշի, սիվ Սանդրօ, քո սիպտակ հոգուն մատաղ...

—Բրաւօ,—բղաւեց շկոտիչիկը խրոխտ պաներազմական եղանակով։

—Բրաւօ,—կրկնեցին Մեղրի քաղաքի կամաւոր վիննուորները։ (Այս առիթով տես Մեղրի քաղաքի նկարը «Տարազի» անցեալ համարում)։

—Մաշ կըթողնէի վուր կուգայիկուն տանիլ տայ,—պաղծեցաւ Սանդրօն, աչքերը սրսկացնելով։

—Մըսրբուր,—մռնչեց վիրգը, ինձի-ն բարձրացնելով։

—Մրսի աղպէր, էդ մասին մի փիլիսոփայական տրակտատ կըգրես իմ լրագրի համար,—պատուիրեց քելեխբաշին։

Մղկոին քրտնեց, վաղօրօք երևակայելով, թէ ինչ ֆիլիքական աշխատանք պիտի գործ դնի այդ տրակտատը գրելիս։ Բայց ձեռաց, տեղն ու տեղը նա կամեցաւ Սանդրոին պատուել. կնճռեց ծուեց, կանգնեց յետին թաթերի վրայ ու սկսեց մազուրկա պարել։ Գրացիօզնիչ համբարձի ամին թռաւ նրա ուսերը և սկսեց երգել մի եորեննակ, հեղինակութիւն բանաստեղծ Ալիքեանի և երաժշտութիւն Աբդուլ-Բաղիի։ Շկափչիկը ասկէ ժետոնը ձգեց Սանդրօի ոտների տակ և չոքեց նրա առջև։

Տեսարանը սրտաշարժ էր։ Սանդրօն զգացեց և արտասուալի ձայնով երգեց.

«Ես, ասումիս պիտացիր, եար,
«Ոնց գիմնամ, մըթէ ես եմ քար...

Ըզգիտեմ ինչով կըվերջանար այդ տաւրօրինակ անտրակտը, եթէ չըլսւէր ռեժիսսօրի զանգակի ձայնը, որ կլօուններին հրաւիրում էր բեմ։ Երբ վերջինները հաւաքւեցին բեմի վրայ, ռեժիսսօրը դիմեց ժողովին, հարցնելով.

—Պարոններ, մի քանի կանկաններին սիրահար ժողովականներ ուզում են նոր հարց գարթեցնել. համաձայն էք...

—Վռնց չինք համաձայն, ինչ հարց-նել կուզի,—գոռաց դեմկրատների մեծ մասը, որ վաղօրօք արդէն գիտէր, թէ ինչ հարց է։

—Այդ ինչ հարց է,—հարցրին գրականութեան ներկայացուցիչները։

—Ձեզանից մէկը պատկառելի ընկերութեան ամենապատկառելի վարչութեան ճակատին դրոշմել էր «զըրպարտող և անանձնարկող» ածականը։ Պէտք է իմանալ՝ ճիշդ է դրոշմել, թէ մի քիչ սխալել է։

—Բայց այդ այսօրւայ հերթական հարցերի մէջ չըկայ, դա կանոնադրութեան դէմ է, ապօրինի է,—ընդդիմացան գրագիանները։

—Պատերազմական դրութեան ժամանակ,—լսւսեց շկափչիկը,—օրէնքները խախտւում են և գործադրւում են բացառիկ կանոններ։ Հարկաւոր է դատապարտել այն ուէնեգատին, որ մեր գլխին հառած է անում մեր քելեխը։

—Բայց բարոյական օրէնքներ կան, որ պէտք է յարգել,—ասացին գրականները,—ոչ մի պատերազմում բռնութիւնը չէ թշնամու վրայ յարձակուել քամակից, այլ էլ հարիւրով մէկի դէմ։ Եթէ ուզում էիք այդ հարցը քննել, պէտք է ձեր թշնամուն նախազգուշացնէիք։

—Ինչ էք երկարացնում, կարդացէք դոկումէնտները։—գոռաց մի գինեվաճառ, որ գիւղացի այգեստերերի գինիները գնելիս մշտ դոկումէնտներով է օգտւում նրանց քէր-քերից։

—Դոկումէնտները, դոկումէնտները,—գոռացին միւսները։

—Չա, դոխտուրները, դոխտուրները կարդալ,—բղաւեց Սանդրօն։

Քելեխբաշին (իմա ֆարսի հեղինակ Նամալեանը), երեսի քրտը սրբելով, ոտքի կանգնեց և կարդաց այն «դոկումէնտները», որ պէտք է, ըստ անուէթեան Վանօի, չարդ ու փշուր անէին քելեխաներների թշնամուն։ Կարդաց զգացաւծ, ոգեւորւած։ Բանից երևաց, որ այդ «դոկումէնտները» դեռ ամիսներ առաջ քելեխաներների թշնամին ինքն իր ստորագրութեամբ տալել է «Տարազում»։ Իսկ այժմ տագնապաւոր կլօուններն նրանցից մի փարս են շինել և խաղում են վերնայարկի առջև։

—Այդ լաւ հին բան է,—գոչեցին շատերը հիասթափւած, ոչինչ չըգտնելով դոկումէնտների մէջ, բացի այն, որ վարչութիւնը գիպարտել է քելեխաներների թշնամուն։

—Այս փիչ բան է, քիչ բան է,—տաքացաւ քելեխբաշին։

—Այո, շատ է, շատ շատ է ձեր անանձնութիւնը ապացուցանելու համար,—գոչեցին ոմանք։

Վերկացաւ քելեխաէրների թշնամին և, փորը ծիծաղից բռնելով, նկարագրեց քելեխբաշիի, գինեվաճառների օչինչքագութիւնը և ցոյց տուեց փարս հնարողի անշնորհքութիւնը։

—Կորչի վարչութիւնը, կորչի նրա նախագահը, ամօթ նրանց,—բացականչեց վերնայարկի հասարակութիւնը, որի վրայ մեծ յոյսեր ուենէին կլօուններն։

Այստեղ պատահեց մի չըտեսնւած, չըլսւած, մի անբնական բան. որտեղից որ է քելեխբաշիի մէջ գարթնեց մի տաւրօրինակ զգացում—ամօթի զգացումը։ Նա մի քիչ գոնատւեց, բայց միայն մի քիչ, չնոյ էլ ամենի առատութեամբ սկսեց իւղը հոսալ նրա կարմիր երեսից և դեղին աչքերից։

Գրականները և թաշկինակաւոր տիկիններն ու օրիորդները բարձրաձայն ծիծաղում էին։ Ճկափչիկը բարկացաւ նրանց վրայ և կամեցաւ մի սոսկալի հայհոյանքով զսպել նրանց։ Սակայն իզուր. ծիծաղը քանի գնում սաստկանում էր։ Այն ժամանակ շկափչիկը ոտքի կանգնեց և, ձեռը ուժգին զարկելով սեղանին, գոչեց.

—Ի՞նչ էք ծիծաղում, ես այդ դոկումէնտները «Տարազում» չէի կարդացել, Ծուլութիւն էի արել։

Գրացիան բռնեց նրա փէշից և ականջին շշնջաց.

—Խեչօ, սուտ մի ասիլ, կարդացել ես. դու բոլորը կարդում ես, ինչ-որ գրում են «Տարազում»։

—Սուս, քո բանը չի, կլումբոզ,—զսպեց նրան Խեչօն,—այո, ես ծոյլ չեմ, բայց ժամանակ չունեմ, ես զրաղւած եմ Բիսմարկի և Սօլիսբըրիի հետ նամակագրութեամբ, Ներկայումս խորհրդակցում ենք Կրէտէի հարցի մասին։ Բայց ես կասեմ ձեզ, որ պէտք է զրպարտել, ներողութիւն, դատապարտել այդ անիծեալ ռենեգատին։ Գիտէք ինչու (լսեցէք, լսեցէք), որովհետև նա չանդգնում է իմ մասին գրել, թէ ես իբր քելեխասէր եմ։ Այն ինչ՝ ձեզ յայտնի է, ես ով եմ (ծափահարութիւններ աջակողմեաններից, շւոցներ ձախակողմեաններից)։ Չարկաւոր չէ երկար խօսել. նայեցէք ձախ երեսիս անջնջելի վէրքին (լսեցէք, լսեցէք), նայեցէք այս ժետոնին (սարսափ աջակողմեանների մէջ), կարդացէք «Ռազմագիտական կրկնակի նահանջը Սպանդարեան ճակատամարտից» վերնագրով պատմութիւնը իմ մասին և կըճանաչէք, թէ ես ով եմ (օօõօ)։ Այո, դատապարտել այդ անիծեալ երկար մազերաւորին. ես ատելով ատում եմ նրան...

—Քո հոգուն մատաղ, Խաչան ջան. բուլբուլ է, բուլբուլ,—գոչեց Սանդրօն հիացած։

Գրականների և թաշկինակաւոր տիկինների ու օրիորդների շրջանում ծիծաղը արդէն հոմերական դարձաւ։ Նրանց էսթետիքական զարմանութիւնը անսահման էր։ Ծիծաղում էր և վերնայարկը։ Կլօունները շփոթւեցին։

Յանկարծ լսեց մի սոսկալի դղրդիւն։ Ներքը այժմ փղինն էր։ Նա կամեցաւ ատենաբանութիւն անել, բայց քրտնեց, չկարողացաւ։ Կնճիթը բարձրացրեց, աչ ու ձախ հանդիսականներին գլուխ տւեց, կամեցաւ Նարեկից մի արիա երգել։ Այդ էլ չեղաւ, սայթաքեց, ամբողջ մարմնով թաւալւեց գիտութեան ու գրացիայի վրայ և ճանճերի պէս ճլմտեց նրանց։ Խեղճ Համբարձի ամիլի և Ստեփան ափուի դիակները դուրս տարան։

Բայց փարսը դեռ շարունակւեց։ Քելեխբաշին կաշւից դուրս էր գալիս, որ գոնէ վերնայարկին զսպէ, որ նա չըշւացնէ, այլ ծափահարէ փարսին, բայց իզուր։ Ճկափչիկ Խեչօն ուղղակի կորցրել էր իրան. թռչում էր վայր ու վեր, ձեռներն ու ոտները շարժում, տուտինգ էր տալիս գիժ մոզու պէս, բայց ոչինչ չէր օգնում։ Քելեխբաշին խորովածի պէս տրորւում էր իր տեղում։ Փիղը թառանչում էր ու մռնչում, քթից մեղրամոմի ծուխ արձակելով։ Ոչինչ չէր օգնում։

Ռեժիսորը զանգակը հնչեցրեց և գոռաց.

—Վստահութիւն, պարոններ, վստահութիւն, որ իմ խումբը յաջորդ փարսը լաւ կըխաղայ։

—Չա, ուստայութիւն, ուստայութիւն,—աղաղակեց Սանդրօն։

—Ի՞նչ, բստայութիւն,—գոչեց մի գինեվաճառ, վստահութիւն բառը բստայութիւն, այսինքը բստել (բօթել) հասկանալով։

Եւ քամակից զողնովի մօտենալով քելեխակերների թշնամի «ռենեգատներից» մէկին, ետևից կամեցաւ բստել (բօթել)։ Բայց վերնայարկից բռունցքները բարձրացրած ներքև վազեցին մի քանի տաբարիւն երիտասարդներ, որ մի լաւ «դհոլ» ածեն փղի, գինեվաճառի, քելեխբաշիի և շկափչիկ Խեչօի փորին։ Բարձրացան աղմուկ, շփոթութիւն, գոռում-գոչիւններ։

—Թէ աղպեր ես, Սանդրօ, օգնութեան հասիր,—գոռում էր Խեչօն, փղի փորի տակը մտած և ժտեօնը իբրև վահան բռնած, պաշտպանւելով։

Բայց Սանդրօն աներևութացել էր։

Տաբարիւն երիտասարդներին զսպեցին։ Փիղը օդի սակաւութիւնից ուշաթափւել էր։

—Ո՞նց է, Վանո, Լէ, Դէւօ.—դիմեցի ես բարեկամիս։

—Սուս, ես էստի չեմ,—ասաց նա, մի ծակուռ մտնելով,

—Վա, վունց թէ էստի չիս, մէ դուրս արի, երեսդ տեհնիմ,—ասացի ես, քաշ տալով նրան սեղանի տակից։

Վերջապէս, յայտնւեց Սանդրօն և գոռաց.

—Էստի իմ, մի վախենաք...

Բայց այլ ևս օգնութեան կարիք չըկար. տաբարիւն երիտասարդները կամաւ հեռացել էին, ուստի Սանդրօն սկսեց խրոխտանալ։ Նա ծակուռուկից դուրս քաշեց լեզուսլատառ եղած քելեխբաշին, շկափչիկին, գինեվաճառին, հաւաքեց նրանց ուշաթափւած փղի փորի վրայ։ Փնտրեց, գտաւ ոտնատակ եղած և ցեխոտւած մի ծակ դրօշակ և բարձրանալով փղի փորի վրայ, բացականչեց.

—Կեցցէ կուցացկութիւնը...

Ճկափչիկ Խեչօն ծակը մտած նապաստակի պէս դէս ու դէն նայեց և, համոզւելով, որ վտանգը անցել է, գոչեց.

—Յաղթութիւն։

Բայց ինքն իր ձայնից վախեցաւ և երեսը ծածկեց Վանօի փէշերի տակ։

Այսպէս վերջացաւ երեկոյթը։

Յօգուտ Հրատարակչական ընկերութեան գանձարանի մնաց զուտ արդիւնք 300 րուբլի։ Իսկ յօգուտ նրա Վարչութեան մնացին «զրպարտիչ և անւանարկող» ածականները...

Մադոս

Ընդդիմախօսութիւն

Մշակի № 40-ում նրա Գրողն ասում է. «Մի երիտասարդ, Յովհաննէս Թումանեանց, բայց Թողնենք նրան,—«զի ոչ գիտէ զինչ գործէ». նա ինքն իրան թաղեց հէնց իր յօդուածով, որի մէջ, նա, *խուժանի* այդ հարազատ զաւակը, արիստոկրատիական ծիրանի հագած, արշաւանք է սկսում *խուժանի* դէմ։ Սաղ է գալի պօլսական առածը՝ ով դարք, ով բարք»։

Այս տողերը ես արտագրում եմ և պատասխանում, որովհետև այնպիսի խօսքեր կան, որ տեղն եկած ժամանակ չասելը ուղղակի չանգանք է, որ կարող է մնալ ծանրացած մարդու սրտի և խղճի վրայ։

Ինչ վերաբերում է Ձաղելուն՝ ես այդ համարում եմ մի շատ անզօր և միամիտ մասխարութիւն, որ միմիայն այնպիսի մարդիկ կընեն, որոնց համար Մշակի էջերից դուրս էլ աշխարհ ու կեանք չըկայ։ Այդպիսի մարդիկ նման են լսւրդի, որ ինչ բանի որ դունչը դիպչում է, միայն այն է ընդունում, և նրանից դէնը էլ բան չըկայ։ Թողնե-

լով դրանց՝ այդ լսելիքից ու բարոյականութիւնից զուրկ՝ ձգտումները, որ մաքրութեան վկայական են բաժանում, գործչի ատտեստատ են տալիս, կեանքի ու թագման վճիռներ են կարդում, թողնելով այդ ձգտումները, որոնք որքան զզրելի են, այնքան էլ արժանի են լուրջ ուշադրութեան, որպէս բարոյական անկման ահռելի նշաններ,—ես ուզում եմ խօսել խուժան բառի մասին, որի պատասխանատուութիւնն ընկնում է ինձ վրայ։

Այդ՝ վերև արտագրած տողերը, վերաբերում են Տարազի №12-ում տպած իմ նամակին, որի մէջ հրատարակչական Ընկերութեան վերջին ընդհանուր ժողովի մասին խօսելիս՝ ի միջի այլոց ասել էի. «Իր խուժանական լոգիկայով նա (ընդհանուր ժողովը) մինչև անգամ հնարաւոր գտաւ իր սև գործերի բազմութեան առաջ դնել պ. Չիրվանզադէի պատւի խնդիրը և այլն»։ Այստեղից շատ պարզ է, թէ ում են վերաբերում իմ բառերը. բայց եկէք տեսնէք, որ աչքակապութեան մի եղանակ կայ և հրապարակախօս կոչուած արարածների մի ցեղ, որոնց դիպլոմ թէ չէ, կըսկսեն ոռնալ—օ, ժողովուրդ, օ, ժողովրդի իրաւունք, օ՜, հասարակութիւն... որ ժողովուրդն էլ կարծի, թէ ճիշդ որ այդ պարոնների և իրան մէջ մի ընդհանուր բան կայ, մի կապ կայ, և նրանց դիպած հարուածն իրան՝ ժողովրդին է վիրաւորում։ Այս եզիպտական սկզբունքին հաւատարիմ՝ այժմ էլ այդ Մշակի Գրողը իմ գրածը խեղաթիւրում է և ինքը զարմացած, գրաբառ բացականչութիւններով, ով դարձ, ով բարձ աղաղակելով, ուզում է ուրիշներին էլ զարմացնել, թէ տեսէք ժամանակն ինչպէս է խարար եղել, որ Յովհաննէս Թումանեանցը, *խուժանի հարազատ զաւակը՝ արշաւանք* է սկսում *խուժանի դէմ*։ Ի հարկէ, հասկանալի է, թէ ինչ է սրա յետին միտքը, ինչպէս է ուզում ընթերցողին տրամադրել, ինչպէս է ուզում մտքեր պղտորել։ Բայց ես կըպարզեմ, իսկ պարզութիւնը այդպիսիների մահն է։

Նախ և առաջ մի հարց. յառաջադիմական թերթի ազատամիտ Գրող, ինչ զարմանք, եթէ *խուժանից* դուրս եկած մարդը կուի *խուժանի դէմ*։ Ձեր կարծիքով մի՞թէ այդ այնքան դատապարտելի գործ է, որ դրա համար կաքեզի և մարդու թաղել, և գրաբառ աղաղակել՝ *ով դու, ով դարձ, ով բարբ, և զանազան պառաւական բացականչութիւններ*։ Եւ դուք դեռ համարձակւում էք յառաջադիմականութեան մասին խօսք ձգել, և դուք ձեզ համարում էք աւելի բարձր քան *խուժանը*, աւելի ազատամիտ, քան հալալաբարցի դէդա Մաթօն...

Այո, պ. *խաւարամիտ* (այս գըրչի սխալ չէ), իմացած եղէք և գործացած էլ մնացէք, որ տերը եկած ժամանակ ես հանգիստ խղճով և մաքուր ոգևորութեամբ արշաւանք կըսկսեմ և՝ այն *խուժանի* դէմ, որի հարազատ զաւակն եմ ես և որին սիրում եմ։ Ես չեմ ծառայում և չեմ էլ ծառայելու *խուժանի* հաճոյքին ու ձայնին, այլ այն գաղափարներին, որ բարձրացնելու են նրան։ Այս թող լինի մի յայտարարութիւն ձեզ զարմացնելու համար և մի երդում այն *խուժանի* առաջ, որի կեանքի խորհուրդն ինձ համար այնքան թանգ է և սուրբ։

Բայց բանն այն է, որ դուք սուտ էք ասում, պարոն. ոչ աւիթ կայ և ոչ էլ ես արշաւանք եմ սկսել այն *խուժանի* դէմ, որին դուք հովանաւորէք հանդիսանում ձեր վանական զայրոյթով։

Ո՛չ, պ. Գրող, իմ նամակում գործ ածած *խուժանական* բառը վերաբերում է ձեզ և ձեր ընկերներին։ Ես իսկի չեմ էլ մտածել ձեզ համեմատել այն *խուժանի* հետ, որի հարազատ զաւակն եմ ես, որովհետև ձեր և այն *խուժանի* մէջ սար ու ձորեր կան։ Այն *խուժանը*՝ որքան էլ որ ընկած լինի, այսու ամենայնիւ այնպիսի մաքուր ու բարձր յատկութիւններ ունի, որ անմատչելի են ձեր գործունէութիւնների։ Այն *խուժանի* ազատութիւն եթէ մէկն իր հակառակորդին ասում է. ես զէնք չունիմ ձեռքիս, ես անսպատրաստ եմ, հակառակորդն իրաւունք չունի իր զէնքը շարժելու, հարուած տալու. իսկ եթէ այդ արաւ, նա համարում է նամարդ (տմարդի, ոչ մարդ), իսկ արարքը՝ նամարդութիւն։ Եւ այս ամենամեծ նախատինքն է, ամենացաւ անունն է, որ կարելի է տալ մարդուն ու գործին։ Եւ այս արատից զարհուրում ու գգւում է ամեն մի մարդը այն *խուժանի*, որի հարազատ զաւակն եմ ես։ Նա այս գործունէութիւնն ու ոգին իր կաթի հետ ջամբել ու ներշնչել է ինձ, և սրանից էր, որ ես հրատարակչական Ընկ. վերջին ժողովում լինելով՝ այնքան զզուեցի և զզուանքս էլ հրապարակաւ յայտնեցի ձեր դէմ *)։ Այդ ժողովում՝ պարապմունքները վերջանալուց յետոյ, ընտրութիւնները կատարելուց յետոյ, երբ ժողովականների մեծ մասն արդէն ցրւել էին (որոնք եթէ իմանային՝ կրմնային և գուցէ ուրիշ կարծիք յայտնէին), մնացածներն էլ ուզում էին հեռանալ, դուք չանկարծ ձեր պորտֆէյլից հանում ու ժողովի մնացորդի առաջն էք դնում տեղեկագրից և ժողովի պարապմունքներից դուրս՝ պ. Չիրվանզադէի հարցը։ Այստեղ ինձ համար Չիրվանզադէն չլինի, ով կուզէ լինի։ Դուք ուզում էք մարդու պատւի մասին մի վճիռ կայացնել ուղղ, մի խօսքով, թիկունքներդ ձայների բազմութեամբ ամրացրած, ուզում էք հարուած տալ նրան։ Դոկումէնտների անուն էք տալի, վկաներ էք չիշում, արձանագրութիւններ էք դնում սեղանի վրայ։ Այդտեղ կանգնած է ձեր հակառակ կողմը—պ. Չիրվանզադէն։ Նա ասում է. պարոններ, ես էլ ունիմ դոկումէնտներ, բայց այժմ մօտս չեն, ես էլ վկաներ ունիմ, որոնք այստեղ չեն, այժմ ես անպատրաստ և անտեղակ եմ ժողով եկել, ես այժմ զէնք չունիմ ձեռքիս. թոյլ տուէք միւս ժողովում քննելու, կամ մի նոր ժողով կազմեցէք, կամ մի մասնաժողով ընտրեցէք, որ ես հնար ունենամ պատրաստուած ներկայանալու և պատասխան տալու։ Նա կրկնում է իր խօսքը, դուք գարձեալ ձերն էք սղնդում։ Նա երեքկնում է իր բողոքը, և այսուամենայնիւ դուք ձայների մեծամասնութեամբ վճռում էք ձեր ցանկացածն անել, և այն էլ այսպիսի եզիպտական եղանակով, թէ մենք միայն զեկուցում ենք ուզում լսել։ Իսկ զեկուցումը լսելուց յետոյ կանգնում էք՝ ու ձայների բազմութեամբ վճռում, որ Չիրվանզադէն մեղաւոր է, պարտ է, և,

*) Դեռ մի կողմ եմ թողնում տեղեկագրի քննութիւնը, երբ դուք ձեր անխօս ձայների մեծամասնութեամբ բռնանում էիք դատողութիւնների և խնդիրների վրայ, և այնպէս կորցրիք կուսակցական երագներով տաքացած գլուխներդ, որ ընդհանուր ժողով բերած հարցերից երկուսն էլ հետներդ ետ տարաք։ Կարդացէք տեղեկագիրը—ընդհանուր ժողովի պարապմունքները № 4. Յ. Թ.

մեկը կանգնում է, ասում՝ ես կը-տամ, միւսը՝ թէ կէսն էլ ես կը-տամ, և ասլա հարա-հրոցով վտահութեան քէչ է տալիս վարչութեանը։

Այս բոլորը տեսնելուց յետոյ, կըրկնում եմ, թէկուզ Ջերմանդպէն չըլինէր, մի յետին մարդ լինէր և այն էլ յայտնի մեղաւոր, ես դարձեալ կըզգուէի ձեզանից և նոյն խօսքերը կասէի. որովհետև ամեն մի յանցաւորի յանցանքից աւելի գարշելի ու քքտմնելի գործ է այդ ձեռք դատաստան կորելը, ամեն մի յանցաւորից աւելի գատապարտելի է այդպիսի նենգամիտ, նախապաշարումներով կաշառուած ու ժամադիդատաւորը, և նրա համար էլ ես ձեր վարմունքը անւանեցի խոժանական։ Ես չեմ դադարիլ այդպէս անւանելուց, թէկուզ և դրա համար լինի թողեն, ինչպէս արին գերեզմանատուն գործած Աշոի № 40-ում։

Յովհաննէս Թումանեանց

գեղարուեստ

թատրոն

Ստոյգ աղբիւրներից տեղեկանում ենք, որ Թիֆլիսում կազմուում է հայոց թատրոնական բեմի վիճակով հետաքրքրուողներից մի խումբ, որ մտադիր է առաջիկայ սեզոնից թատրոնական գործը հաստատ հիմունքների վրայ դնել։ Մի շարք թատերասէրներ պատրաստակամութիւն են յայտնել որոշ գումար ժողովել իրանց մէջ, թատրոնի նախնական ծախսերը հոգալու, խումբը կազմակերպելու համար։ Մտադրութիւն կայ բոլոր ցիր ու ցան եղած ոյժերը հաւաքել և կազմել մի մեծ խումբ։ Ի սրտէ համակրելով միշտ անձանց, ձեռնարկութեանը, ցանկանում ենք նրան աջողութիւն։ Մեզ թըւում է, որ թատրոնական գործը Թիֆլիսում հաստատ հիմունքների վրայ դնելը՝ ոչ առանձին մեծ դժւարութիւնների կարող է հանդիպել և ոչ էլ խոշոր նիւթական զոհողութիւններ կըպահանջէ։ Փորձերը ցոյց են տուել, որ հայ բեմը կարող է ինքն իրան էլ գոյութիւն ունենալ, եթէ դերասանների մէջ համերաշխութիւն լինի և նրանք աշխատեն գործել սիրով և միացած ոյժերով։ Եթէ մեր բոլոր դերասանուհիներին և դերասաններին հաւաքենք, կարելի է մի բաւական աջող անսամբլ կազմել, որ կարող է Թիֆլիսի հայ հասարակութեան թատրոնական պահանջներին գոհացում տալ։ Այն ինչ՝ այդ աջողանսամբլը այժմ մի քանի խմբերի բաժանուած, ներկայացնում է բեկբեկուած և անջատուած մասնիններ, որոնք ոչ մի ճաշակի գոհացում չեն կարողանում տալ։

Ահա այն ոյժերը, որ կարող են խմբի անդամներ լինել իրրև շնորհալի դերակատարներ զօրեղ դրամատիկ դերերի համար՝ պ. պ. Աբելեան և Պետրոսեան, կոմիկ խոշոր դերերի համար պ. պ. Տէր-Թաւթեան, Արամեան և Վրոյր, երկրորդական դրամատիկ և սիրահարական դերերի համար պ. Օհանեան, երկրորդական կոմիկ դերերի համար պ. պ. Յարութիւնեան, Մամիկոնեան, Աւետեան և Պարոն-Սարգսեան։ Կանանց դերերի համար այժմեական ոյժեր ունենք. Փէչկեան քոյրերը, որոնցից մէկը կարող է շնորհալի սուբրետ-դերասանուհի լինել, եթէ թողնէ օպերետային ձևերը, իսկ միւսը լաւ է դրամատիկ դերերի համար։ Տիկին Զաքել աջող է մայրերի դերերում, տիկ. Վարդուհի կոմիկ դերերում, տիկ. Փառանձեմ երկրորդական կոմիկ դերերում, տիկ. Մելիքեան, կարող է աւելի շնորհալի ոյժ լինել, եթէ կանոնաւոր բեմուենանք։ Կայ և մի նոր աշխատասէրոյժ, օր. Խիթարեանը, որ մի քանի դրամատիկ դերերի համար նոյնպէս կարող է օգտակար լինել։

Օր. Ախաշեան երկար տարիներ խաղալով, ջերմեռանդ հայերէն սովորել և այսպիսով նրա ընդունելութիւնը հանդիպում է խոչընդոտների, թէև վոդեվիլներում կարող էր օրհորդը պիտանի լինել։

Խոշոր կանացի դրամատիկ դերերի համար դարձեալ անհրաժեշտ է դիմել մ. Պոլսի օգնութեանը։

Անհրաժեշտ է, որ թատրոնի ապագայ ղեկավարները ուշադրութիւն դարձնեն ոչ այնքան առանձին դիմաւոր ոյժերին, որքան առոմբլի վրայ։ Բեմի համար անսամբլը էական նշանակութիւն ունի։ Պարտաւորական պիտի լինի նաև, որ դերասանուհիները և դերասանները անպայման ուղիղ և գեղեցիկ արտասանեն հայերէն լեզուն։ Թիֆլիսի և առհասարակ զաւառական առոգանութիւնը խոտիս պիտի հալածէլ գրականական սլիւս ներում։ Բաւական է, որքան մեր լրագրութիւնը տանջուեց հայերէն լեզուի աղաւաղումով։ Նաև պիտի առանձին դրականական մանսաժողովի քննութեան ենթարկել ներկայացելիք պիեսների լեզուն։

Եւ այժմ այսքանը։ Ժամանակին աւելի մանրամասն կըխօսենք ամբողջ խմբի մասին, նոյնպէս կըցայտնենք մեր կարծիքը նրա բռնելիք ուղղութեան վերաբերմամբ։

Վաղը անց, ամսոյս 14-ից, սկսում են պետական թատրոնում մ. Լ. Լիւբէդովի դեկտմբերի համար ուս դրամատիկ արտիստների ընդհերութեան ներկայացումները։ Վաղը պիտի խաղան Գրիբոյեդովի Խելքից պատուհաս կոմեդիան։

Տեղերի գները էժանացրուած են։

ՅՈՅՆ—ՏՈՀԿԱՍԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Երբէք այնչափ էլ սկսել է յոյն-տոհկասկան պատերազմը հաստատ անկարելի է ասել թէ յաղթութիւնն ուր կողմը կըլինի։ Յունական ծովային ոյժն ասելի է հզօր քան տոհկականը, իսկ ցամաքում թշնամին է զօրեղ։ Յոյների հայրենասիրութիւնը մեծ է։ Փախկասուն, բարձրատիճան կանայք, նոյն իսկ Թագուհին և իշխանք ռազմի բանակն են պատրաստուում գնալ իրանց քնքոյշ ձեռքերով սպեղանիք դնելու վիրաւորեալների վէրքերին։ Ժողովուրդը լայն բացել է իր քսակի բերանը նմասւորների թիւը շատ նանակ ստացանում է։ Արդէօք քրիստոնեայ Եւրոպան լուռ ու մունջ մնալու է հանդիսատես, թէ ստիպուած է լինելու այս և այն կողմերի կռիւն անցնել,—այդ յայտնի չէ։ Այսքանը միայն պարզ է, որ Մակեդոնիայում, Ալբանիայում մեծ շարժում կայ և Բալկանեան թերակղզում կայծ երևալուն պէս՝ Եւրոպական ահեղ պատերազմ կըծագի։

Քաղաքական

«Пет. Вѣд.» լրագիրը հերքում է Կովկասեան կրթական շրջանի հոգաբարձի այն հաշիւը, որ նա հայոց դպրոցները գրեթէ ոչինչ է համարում մանկավարժական կողմից։

„Չենք չըկայ, պատասխանում է Пет. Вѣд. հայոց դպրոցները ռուսաց դպրոցներին հակադրելու, որովհետև 1881 թ. կանոնների յետոյ վայ Կովկասեան կրթական հոգա-

բարձի հպատակած ծրագրից և ռուս լեզվի, պատմութեան և աշխարհագրութեան դասերի թուից յայտնի երևում է թէ՝ մի դասեան, երկդասեան հայ եկեղեցական դպրոցներում ռուսաց լեզվի ուսանդումը, նոյնքան կանոնաւոր և բարձր դիրքի վրայ է դրւած, որքան և համապատասխան պետական ու հասարակական դպրոցներում, որոնք անմիջապէս ենթակայ են Կովկասեան կրթական իշխանութեան։ Եթէ հայ դպրոցները դրանցից զանազանւում են, այդ միայն նրանով է, որ հայոց դպրոցներում թուաբանութիւնը և բնական պատմութիւնը աւանդւում են հայերէն լեզուով։ Միևնոյն ժամանակ պէտք է ի նկատի ունենալ, որ հայոց ծխական դպրոցներում ռուս լեզվի դասաւանդութեան յաջողութեան համար Կովկասեան կրթական իշխանութեանն իրաւունք է տրւած հսկել այդ դպրոցների վրայ իր պաշտօնեաների և ուսուցիչների միջոցով։ Եւ մենք հնար ունենք հաղորդել լաւ տեղեակ և կատարելապէս արժանապատւոյ պնդիչների խօսքերից, որ 2այս հազարդիլ դէպքեր են եղել, երբ հայ հոգևորականութեան նկատած լինի, թէ այս ինչ կամ այն ինչ դպրոցում ռուսաց լեզվի դասաւանդութիւնը թոյլ է և միևնոյն ժամանակ հայ հոգևոր իշխանութիւնն ամեն անգամ պէտք եղած կարգադրութիւնն արել է գործը բարւոքելու նպատակով՝ հետացնելով անփոյթ ուսուցչին և նորը հրաւիրելով կամ թէ խստիւ ներշնչելով դպրոցի տեսուչներին արթուն ուշադրութեամբ հետևել դասաց լեզվի դասաւանդութեան»։

Պատրիարքի բողոքագիրը

Ինչպէս յայտնի է, Օրմնեկեան պատրիարքը բողոքել էր դատական եւ ճբրանիսական դեսպաններին, որ Դուռը մինչեւ այժմ իր տւած խոստումները հայերի մասին չի իրագործել։ Հայ պիրներուամ արդէն զգացրել է այդ բողոքագրի պատճէնը, որ բաղկացած է 11 կէտերից։ Պատրիարքի բողոքագրից երեւում է. 1) որ տանիկ կառավարութիւնը ընդհանուր ներումն չի շնորհել բոլոր հայերին, մինչեւ այժմ էլ հարիւրաւոր հայեր ազնչւում են բանտերում. 2) Տիրլիսի, Տրապիզոնի, Աբդրկիրի առաջնորդները չեն յանձնել պատրիարքարանին, այլ աքսորել են Տրիպոլիս. 3) Պետական գործարաններից արձակւած հայերը նորից չեն ընդունւել 4). թէեւ իրադէով վերացւած էր գինարակը հարկը վճարած նահանգներում, պակաչն այդ այժմ էլ իրագործւում պահանջւում է. 5) Պետական տեմպրագրներից 2000 մղոն գիծ ալիւսը չի տւել. 6) Պատրիարքարանի հսկայ նշանակութեամբ քարեզ. յանձնաժողով կազմելը զինւորական դպրոցների համար։ 7) Հրօրինակներ հայերին չի թոյլատրւում իրանց հետեղեցու գիրքը վերադառնալ. չեն վերադարձնում նաեւ յափշտակւած նպատակներ կանայք եւ երեխաներ. 8) Ցեղ չի կատարւում իննիակոչ-կաթողիկոս Գոզի. Գոզանցեանը, եւ այդ նկարագրութիւնները ապացոյց է բերում Պատրիարքի վիրաւորում. 9) Ձեն բողոքում վերադարձնել Սսի կաթողիկոսի կայքերը Երուսաղէմի վանքին. 10) Տարսոնում գինուորական իշխանութիւնները գրաւել են հայոց գերեզմանատունը, որովհետեւ նա երբեմն պատւած է մեռելներով. 11) Թանկիլ պատճէնները միեւ

ւել են ապստամբների հետ ընդհարման ժամանակ։

—Մի քանի պետութիւններ իբրև թէ առաջարկել են իտալական ծովակալ Կանէւարոյին Կրէտէի կառավարիչ, սակայն ֆրանսիական կառավարութիւնը մերժել է։ Միւս կողմից լսւում է, որ պետութիւնները առաջարկել են Կրէտէի ազգային ժողովին ընտրելու իրանց համար ընդհանուր նահանգապետ։ Այդ բանին առայժմ ընդդիմանում են Գերմանիան և Աւստրիան։

—Սերբիայի երիտասարդ թագաւոր Ալէքսանդրը նշանուել է Ձերնոգորիայի իշխանի կրտսեր դուստր Կսէնիայի հետ։

—Սերբիական կառավարութիւնը զէնքի է կոչել բոլոր պահեստի օֆիցէրներին, ազգային գւարդիային և մելիցիային։ Սահման է ուղարկւած շատ պատերազմական պաշար։

—Բուլղարիայում գտնւած տաճիկներն էլ զինւում են։

—Անգլ. արտաքին գործերի մինիստրի օգնական Կէրզոնը ուղևորւեց Բերլին, իսկ գերմանական կանցլեր Չոհէնլոէն Պարիզ։ Երևի քաղաքական նոր դէպքեր տեղի կունենան։

—Փոխ-գնդապետ Բերտէ Իտալիայում ժողովել է 2000 հազար կամաւորներ և հագցրել գարիբալդեան կարմիր շապիկներ։ Նրանք ուղևորւեցին Յունաստան։

—Կրէտէում Եւրոպական նաւատորմիղի բանը քանի գնում դժւարանում է, այնպէս որ Եւրոպայի և ապստամբների մէջ քիչ է մնում կանոնաւոր պատերազմ բռնկի։ Եթէ գործերը այսպէս շարունակւեն, եւրոպական զօրքերը ստիպւած կլինեն խառնւել նաև յոյն-տաճկական պատերազմին։ Թէև Սերբիան, Բուլղարիան և Ձերնոգորիան մինչև այժմ չէզոք են մնում, սակայն Մակեդոնիայում և Ալբանիայում եթէ խառնակութիւններ սկսւեն, որ շատ հաւանական է, դրանք էլ ստիպւած կլինեն ասպարէզ իջնելու։ Այդպիսով ասում են լրագիրները՝ Բալկանեան թերակղզու վրայ հրդեհ կբորբոքի, որ կարող է տաճկական կայսրութեան անկումը փութացնել։

—Թէև պետութիւնները վճռել էին պաշարելու յունական Պիրէյ նաւահանդիստը, սակայն այժմ անհնար են համարում այդ որոշումը իւ կատար ածելու։

—Գերմանիան, որ առաջարկել էր, Կրէտէն պաշարելով անձնատուր պնելու, մի հատ զինւոր չի ուղարկել Կրէտէ, բացի մի մարտան սւից։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Բագու. Ա. (Առաքել) Ղուլեանցին։ Դուք Մշակում մի նամակ էք տպել, ուր յանդգնում էք մեր գրողների մաքրութեան մասին կարծիքներ յայտնել։ Խնդրում ենք յայտնել, դուք որ Ղուլեանցն էք, Արդեօք այն Առաքել Ղուլեանց անտառապետը չէր, որ մի ժամանակ Մշակում ազատամիտ գաղափարներ էր քարոզում եւ յետոյ խորասուզւելով իր պաշտօնի մէջ, չքացաւ եւ իր ազատամիտ գաղափարները թաղեց մի ինչ որ Ձերնիդովիցում։ Եթէ այդ Ղուլեանցը չէք, ձեզ հանգիստ կըթողնենք Մշակի էջերը ապականելու, որքան ըէֆներդ է, որովհետեւ էլ ով ասես՝ որ այժմ չի ապականում այդ թերթը, որի դռները 5-6 տարի է կրունդնեցի վրայ բաց են բոլոր անցորդների համար։ Կրկնում ենք. եթէ մեր յիշած նախկին ազատամիտ անտառապետ Ղուլեանցը չէր, ձեզ հանդիստ կըթողնենք, իսկ եթէ այն էր, ձեզ համար մի գեղեցիկ սիւրպրիզ ունենք—մի անջնջելի զոկումէնտ, ձեր ձեռով գրւած, մի զոկումէնտ, որ ձեր բարոյական պատկերը հիանալի կերպով կըներկայացնի եւ ցոյց կըտայ, թէ ինչ տեսակ մարդիկ են յանդգնում գրականական էտիկայի եւ բարոյական մաքրութեան մասին խօսել։

Խնդրում ենք, մի կերպ մեզ յայտնել. եթէ դուք անտառապետ Մշակի աշխատակից Զոթիկից-քննադատ եւ բարօյախօս Առաքել Ղուլեանցն էք, որ վերջերս զտնւում էր իր պաշտօնով Ձերնիդովիցում—մենք ասպարէզ կըհանենք ձեր լուսանկարը զոկումէնտներով զարդարւած։

Ալէքսանդրապոլ. Արշ. Սառաջ. Բարեհաճեցէք մանրամասն հաղորդել, որ արէմիան է փչացել, որ բաւարարութիւն տանք. Պատի վկայականի մէջ ասւած է №-10 Տարազի հետ. ուրեմն պէտք է լինի Չարեմի աղջիկը, իսկ դուք գրում էք Աղբիւրի հետ, որ պէտք է Մ[illegible]. Նալբ. եւ Մայր. ննջար. պատկերները լինեն։

Բալախանի. Մ. Ն. Աւելի քան մարզ միշտ յայտարարել է, որ արէմիաներ տրւում են Աղբիւր-Տարազ միւնոյն հասցէով ստացող բաժանորդին։ Չրաւիրում ենք Ձեզ զգոյշ լինել Ձեր դարձւածքների մէջ։ Առ այժմ այսքան։ Մեր պայմաններից դուրս մնոք չունենք ոչ ոքի բացառութիւններ անելու։ Հասցէն փոխւեց եւ արէմիաները ուղարկւեց։ Ձեր 2 ր. բարեհաճեցէք յետ ստանալ։

Լոնդոն. Տ. Ան. Բաֆ. Ձեր յարգելի նամակն ստացանք. շնորհակալութիւն ձեր ջանքերի համար, ուրախութեամբ ընդունեցինք ձեր սիրալիր առաջարկը. նամակ գրեցինք։

Պարիզ. Տ. Մար. Սվաճեան. Աւելի քան ուրախ ենք, երբ հայ կինը հանդէս է գալիս գրականութեան, գեղարւեստի մէջ։ Ձեր սահուն ոճով գրւածները, որ մի կողմից մերկացումներ են ժողովրդի բարձասական կեանքին, միւս կողմից զօրավիգ ճնշւածներին, մի բան, որ խիստ արտասովոր է Տաճկաստանի ճնշող մթնոլորտում եւ գրականութեան մէջ, քանի որ այդ մթնոլորտը խմորւած եւ շաղախւած է բազմաթիւ ճնշւածների, անմեղ բիւր զոհերի արտասուքներից եւ արիւնից բարձրացած գոլորշիներով։

Ընորհակալ կըլինէինք, եթէ ուղարկէիք բացի առօրեայ խնդիրներից, գրական եւ գեղարւեստական աշխարհից էլ ամփոփ յօդւածներ։ Անշուշտ պ. Վահրամի հետ էլ մի օր կայցելէք Կովկաս եւ կըհմայէք մեր ժողովրդին նրա զուշնակի սքանչելի հնչիւններով, որ այդքան հիացնում է Լոնդոնի, Պարիզի երաժշտասէրներին։

Ս. Կարապետի Վանք. Ընորհ. դպիր Ն. Տ. Աւ. Անհամբերութեամբ կարդացինք ձեր նամակը, բայց, ի զուր, ի զուր, ի զուր... Բոլորովին համաձայն ենք ձեզ հետ։ Եւ զարմանում ենք, որ դեռ հետաքրքրւում էք այս փուչ աշխարհով, այս Սոդոմ-Գոմորով. Ոչինչ, ունայնութիւն—ահա այն բոլորը՝ ինչ կարող ենք ձեզ հաղորդել

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Зубольчебный Кабинетъ Д-та Кавказскаго Офицерскаго Эконом. общества Ю. А. ФРАНКЪ. Лѣченіе, пломбированіе, извлеченіе и вставленіе искусственныхъ зубовъ. Пріемъ больныхъ отъ 9-хъ час. утра до 7-ми часовъ вечера.
Головинскій пр. д. Сергѣева № 7
10—1.

Աղբիւր-Տարազի

գրասենեակում Իտալիայից եւ Քրանսիայից ստացել են մեծ բանակութեամբ 200 **տեսակից աւելի** *օյեոգրաֆիական* **շատ գեղեցիկ ՊԱՏԿԵՐՆԵՐ, հատը նապարհածախսով** 30 **կ. միչ** 3 **ր.**

Дозв. ценз. Тифлисъ, 12 апрѣля 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2